



«ԱՅԲ» ավագ դպրոց

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԵՎ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՐՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2020 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

ԳՃԱԿՈՂ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Այս փաստաթուղթը բաղկացած է 7 տպագիր և 1 դատարկ էջերից:

1. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը և երկհնչյունները:

Հայոց թա__¹ավորներից մեկը պալատի լայնար__²ակ հրապարակի կենտրոնում երկնասույ__³ մի աշտարակ կառուցել տվեց: Աշտարակի գագաթին պղնձաձ__⁴լ հսկայական մի զանգ կախեց, որի լեզվակից կապած պարանը մին__⁵և գետին էր հասնում: Ցանկացած մարդ կարող էր գալ, զանգը հնչեցնել:

-Իմ հպատակներից որև__⁶ մեկը, եթե երկրիս կա__⁷ավարիչներից, դատավորներից, հար__⁸ահավաքներից, ոստիկաններից դժգոհ է, կամ եթե նրանք անար__⁹ար են վարվել իր հետ, կարող է գալ, հնչեցնել արդարության զանգը: Ես անձա__¹⁰բ կլսեմ նրա բողոքն ու օրենքի ող__¹¹խստությամբ կպատժեմ մեղավորին, - հայտարարեց թա__¹ավորը:

Ձմեռնամու__¹²ի ցուրտ մի լուսաբաց աշտարակի զանգը զիլ դողանջում է: Պահապանները տեսնում են՝ զանգի լեզվակի պարանը բերանին՝ մի ծեր ավանակ է կանգնած: Ավանակին բերում են թա__¹ավորի մոտ: Պարզվում է՝ երախտամո__¹³ տեղն է նրան վիրավորել:

-Ի՞նչ ես արել, - հարցնում է թա__¹ավորը:

-Ոչ մի վատ բան: Քանի ջահել էի, ուժերս տեղն էին, տիրոջս տան բոլոր դժվար գործերը ես էի անում: Անվեր__¹⁴ աշխատում էի ու աշխատում: Աղուն էի տանում ջրաղաց, անտառից ցախ էի կրում, հանդերից խոտ էի բերում, կտ__¹⁵ը, երեխաներին շալակած՝ ուր ասես տանում... Հիմա, երբ ծերացել, հալից ընկել եմ, տերս ինձ դուրս է արել. ո՛չ խոտ, ո՛չ ջուր: Աղաչում եմ, թա__¹ավոր՝, հրամայի՛ր տիրոջս, որ մին__⁵և սատկելս ինձ մար__¹⁶ավարի պահի, - աղերսում է ավանակը:

Թա__¹ավորը կանչում է տիրոջն ու ասում.

-Լսի՛ր ապերա՛__¹⁷տ մարդ, այս օրվանից օրը երեք ան__¹⁸ամ թարմ ա__¹⁹վույտով կկերակրես քո ավանակին, տաք գոմում առանձին տարա__²⁰ք կհատկացնես, անուշաբ__²¹ր օճառով կլողացնես: Հրամանս չկատարելու դեպքում խիստ կպատժվես, - հրամայում է թա__¹ավորը:

Օրերից մի օր, երբ տերը անուշահոտ օճառով լողացնում էր ծեր ավանակին, փ__²²փուրը լցվում է ավանակի աչքերն ու մ__²³մռացնում: Ավանակը խփում, ջարդում է տիրոջ քիթը:

Տերը մ__²⁴կտալով ասում է.

-Կջարդես, բա ի՞նչ կանես, թա__¹ավորի պես մե__²⁵ք ունես, ինչ ուզես, կանես...

5 միավոր

2. Գրի՛ր հետևյալ բառերի մեկական հոմանիշ և հականիշ:

աղերսել –
լուսաբաց –
անուշահոտ –
հպատակ –

4 միավոր

3. Տեքստից դ՛րս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ.

արմատ+ արմատ-

նախածանց +արմատ-

արմատ+վերջածանց +վերջավորություն-

արմատ+ հոդակապ +արմատ –

2 միավոր

4. Տեքստում գտի՛ր բարդ բառ և բաղադրիչներով կազմիր երկուական նոր բառ:

1 միավոր

5. Տեքստից դ՛րս գրիր 1 սուկածանցավոր բայ և կազմի՛ր այդ բայի հրամայական եղանակը, ենթադրական ապառնի ժամանակաձևը (բայերը գործածի՛ր դրական և ժխտական խոնարհումով):

սուկածանցավոր բայ -

հրամայական եղանակ-

ենթադրական ապառնի –

1,5 միավոր

6. Դ՛րս գրիր տեքստում ընդգծված բառերը և որոշի՛ր դրանց հոլովը, հոլովումը և նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:

3 միավոր

7. Տեքստից դ՛րս գրիր

ա. պարզ ընդարձակ մեկ նախադասություն և համառոտի՛ր:

բ. պարզ ընդարձակ մեկ նախադասություն և դարձրու՛ բարդ:

1,5 միավոր

8. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, խնդրառության, համաձայնության):

ա. Տունը գերծ էր կենցաղային ամենատարրական հարմարություններից:

բ. Ավանակը երախտապարտ էր թագավորից:

գ. Յուրաքանչյուր հարկահավաք և ոստիկան պիտի պատախան տան սխալների համար:

դ. Թագավորն իր սպասավորների հետ գնում են հրապարակ:

2 միավոր

Լեզվամտածողություն

Հայոց թագավորներից մեկը պալատի լայնարձակ հրապարակի կենտրոնում երկնասույգ մի աշտարակ կառուցել տվեց: Աշտարակի գագաթին պղնձաձույլ հսկայական մի զանգ կախեց, որի լեզվակից կապած պարանը մինչև գետին էր հասնում: Ցանկացած մարդ կարող էր գալ, զանգը հնչեցնել:

-Իմ հպատակներից որևէ մեկը, եթե երկրիս կառավարիչներից, դատավորներից, հարկահավաքներից, ոստիկաններից դժգոհ է, կամ եթե նրանք անարդար են վարվել իր հետ, կարող է գալ, հնչեցնել արդարության զանգը: Ես անձամբ կլսեմ նրա բողոքն ու օրենքի ողջ խստությամբ կպատժեմ մեղավորին, - հայտարարեց թագավորը:

Ձմեռնամուտի ցուրտ մի լուսաբաց աշտարակի զանգը զիլ դողանջում է: Պահապանները տեսնում են՝ զանգի լեզվակի պարանը բերանին՝ մի ծեր ավանակ է կանգնած: Ավանակին բերում են թագավորի մոտ: Պարզվում է՝ երախտամոռ տերը է նրան վիրավորել:

-Ի՞նչ ես արել, - հարցնում է թագավորը:

-Ոչ մի վատ բան: Քանի ջահել էի, ուժերս տեղն էին, տիրոջս տան բոլոր դժվար գործերը ես էի անում: Անվերջ աշխատում էի ու աշխատում: Աղուն էի տանում ջրաղաց, անտառից ցախ էի կրում, հանդերից խոտ էի բերում, կնոջը, երեխաներին շալակած՝ ուր ասես տանում... Հիմա, երբ ծերացել, հալից ընկել եմ, տերս ինձ դուրս է արել. ո՛չ խոտ, ո՛չ ջուր: Աղաչում եմ, թագավոր, հրամայի՛ր տիրոջս, որ մինչև սատկելս ինձ մարդավարի պահի, - աղերսում է ավանակը:

Թագավորը կանչում է տիրոջն ու ասում.

-Լսի՛ր, ապերա՛խտ մարդ, այս օրվանից օրը երեք անգամ թարմ առվույտով կկերակրես քո ավանակին, տաք գոմում առանձին տարածք կհատկացնես, անուշաբույր օճառով կլողացնես: Հրամանս չկատարելու դեպքում խիստ կպատժվես, - հրամայում է թագավորը:

Օրերից մի օր, երբ տերը անուշահոտ օճառով լողացնում էր ծեր ավանակին, փրփուրը լցվում է ավանակի աչքերն ու մրմռացնում: Ավանակը խփում, ջարդում է տիրոջ քիթը:

Տերը մղկտալով ասում է.

-Կջարդես, բա ի՞նչ կանես, թագավորի պես մեջք ունես, ինչ ուզես, կանես...

1. Հակիրճ շարադրի՛ր մտքերդ այս առակի մասին: 3 միավոր
2. Հորինի՛ր առակի շարունակությունը: 3 միավոր
3. Բնութագրի՛ր թագավորին: 2 միավոր
4. Գրի՛ր ավանակի տիրոջ խոսքը՝ ի պատասխան թագավորին: 2 միավոր
5. Գտի՛ր տեքստում երկու դարձվածք և բացատրի՛ր: 2 միավոր